

ւեցաւ. «Այս ի Բեթարբա եղև յայնկոյս յորդանանու, ուր էր Յովհաննէս և մկրտէր (Յովհ. Ա. 28): Բեթարբան՝ որ կը նշանակէ «անցք», այն ծանծաղուտն էր՝ ուրկէ կարելի էր հետիոտն երթալ, այդ տեղը կը կոչուէր *էլ-Կորանիէ*, որուն վրայ ի հնուամ շինուած էր քարէ կամուրջ մը՝ ինչպէս յայտնի է մօտի գետեզերեայ աւերակէն, և այժմ ալ կը գտնուի փայտէ կամուրջ մընոյն տեղէն է որ կ'երթային մէկ եզերքէն միւսը: Գրիստոսի մըկըրտութեան տեղւոյն քրիստոնէական հին աւանդութիւնը Բեթարբան ցոյց կու տայ, ինչպէս Աւետարանը: Յորդանանի անդի ի կողմն էր որ քրիստոնեայ ուխտաւորներ կը յաճախէին: Հոգևոր և վանական կեանքը հոն առաւելագլխաւ գորգացած էր շատ հին դարերէ սկսեալ: Եւսեբիոս իր Պաղեստինի տեղերու անուանց գիրքին մէջ (Onomasticon) Բեթարբա անունին տակ կը գրէ, և անոր կը ձայնակցի Յերոնիմոսն ալ թէ՛ Կոստանդիանոսի ժամանակէն սկսեալ բազմաթիւ նորագործներ Յորդանանի անդի կողմը կը յաճախէին մկրտուելու Բեթարբայի մէջ. հետագայ դարերու հաւատացեալք կ'ընէին նոյնը: Պորտոյի Անանուէն ուխտաւորը 333ին իր Ուղեգրութեան մէջ մեր Տիրոջ մկրտութեան տեղը ցոյց կու տայ արեւելեան եզերքին վրայ և կը յարէ թէ նոյն տեղը Մեռեալ Ծովէն հինգ մղոն վեր է, և այն բլուրին մօտ՝ ուր Եղիա մարգարէն երկինք վերացաւ: Յովհաննէս Մոսքոս իր Մարգ Հոգևոր գիրքին մէջ մանրամասն կը յիշատակէ այն մենակեացները որ Յորդանանի անդի կողմը գետեզերեայ այրերու մէջ բնակութիւն հաստատած ու հետեւած են անապատական կեանքի: Նոյն իսկ անոնցմէ մին՝ Յովհաննու Մկրտչի այրին մէջ բնակելով յաջողած է շինել նոյն սուրբին անունով եկեղեցի մը, ուր պիտի կառուցուէր յետոյ Ս. Յովհաննու Մըկըրտչի վանքը, այլ անուամբ Սափսայի (Sapsas) վանքը: Մի ուրիշ շինած է Բոփրասայի (Copratha) վանքը, որուն վանականները կը պահպանէին Գրիստոսի մկրտութեան եկեղեցին, Յորդանանի անդի կողմի եզերքին վրայ շինուած (Տե՛ս Migne, P. G. Հտր 3, Pratum Spirituale, Ա. ՂԱ. ՂԲ.): Պաղեստինագլխա մատենագիր Guerin կը գրէ (Samarie, Հտր Ա. էջ 114) թէ «ԺՉ. դարուն ուխտաւորները Յորդանան կ'երթային լուացուելու Քասը էլ-Եէհուտի արեւելքը գտնուած Մաֆուսէր *էլ-Կորանիէ* անունով ծանօթ ծանծաղուտին մէջ. այժմ ընդհակառակն կ'երթան նոյն աւերակ-